ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 26

«17» ապրիլի 2019 թվական գյուղ Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ՎԱՀՐԱՄԱԲԵՐԴ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԼԵՆ-ԳԷՍ ԹԱՂԱՄԱՍԻ ԽՃՈՒՂԻ 2, ՇԵՆՔ 3, ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔԻ ԹԻՎ 2 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԳՐԻԳՈՐ ԱՐՍԵՆԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԵՐԿՈՒ ԱՆՁԻՑ ԲԱՂԿԱՑԱԾ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների դրույթով և հաշվի առնելով Գրիգոր Արսենի Պողոսյանի և Անահիտ Լիպարիտի Մովսիսյանի 2019 թվականի փետրվարի 21-ի համատեղ դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին

որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Վահրամաբերդ բնակավայրի ԼԵՆ-ԳԷՍ թաղամասի խճուղի 2, շենք 3 հասցեում գտնվող բնակելի շենքի 108.64 քառակուսի մետր մակերեսով թիվ 2 բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 2620845) ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով, անհատույց, նվիրատվության պայմանագրով տրամադրել այդ բնակելի տանը 1991 թվականից փաստացի բնակվող Գրիգոր Արսենի Պողոսյանի 2 (երկու) անձից բաղկացած ընտանիքին:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված բնակարանի նկատմամբ համասեփականատեր ճանաչել՝ Գրիգոր Արսենի Պողոսյանին (անձնագիր՝ AS0481670, տրված 25.01.2019թ. 016-ի կողմից), կնոջը՝ Անահիտ Լիպարիտի Մովսիսյանին (անձնագիր՝ AS0477676, տրված 10.01.2019թ. 030-ի կողմից):

3. Մարմաշեն համայնքի ղեկավար՝ Կարեն Արշակյանին

Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 595-րդ և 596-րդ հոդվածների համաձայն նվիրատուների հետ կնքել գույքի նվիրատվության պայմանագիր, այն ենթարկել նոտարական վավերացման և ապահովել անշարժ գույքի նկատմամբ քաղաքացիների իրավունքների պետական գրանցումը՝ վերջիններիս միջոցներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	*Դեմ՝*	*Չեռնպահ՝*
ՄԱՆՈՒԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	------ v	--------	----------
ՌՈՒՍՏԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	----- v	----------	-------
ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ՝	------ v	----------	----------
ԱՐՏՅՈՄ ԶԱՔԱՐՅԱՆ՝	----- v	----------	----------
ՍԼԱՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝	----- v	----------	----------
ԼԵՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ՝	------- v	----------	----------
ԿԱՄՈ ՂԱՆԴԻԼՅԱՆ՝	----- v	----------	----------
ՋԱՆԻԲԵԿ ՂԱՖԱՐՅԱՆ՝	---- v	----------	----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

«17» ապրիլի 2019 թվական

գյուղ Մայիսյան